**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/51» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ**

**13.11.2026թ.**
**ժամը՝ 12:00**

Հանձնաժողովի նախագահ՝ Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ժ. Անտոնյան

Ա. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Դարբինյան

1. **<u>Հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.</u>**

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «Արսենյան Արսեն Վաչիկի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց հետևյալը.
2026 թվականի նոյեմբերի 4-ի հանձնաժողովն արձանագրել էր, որ մասնակցի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկությունները լրացված չեն եղել, և համապատասխան սյունակներում նշված են եղել գծիկներ:
Մասնակցին սահմանված կարգով հնարավորություն էր տրվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:
Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված փաստաթղթեր, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ՝

- 1-ին չափաբաժնի համար ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի անվանման սյուներում նույնությամբ նշված է «Catt.-UJ5 Catt.-UJJ5» գրառումը:

- 2-րդ չափաբաժնի համար նույն սյուներում նշված է «Catt.-UJ3 Catt.-UJJ3» գրառումը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված գրառումները հանդիսանում են առաջարկվող ապրանքների պայմանական նշումներ, որոնք նույնությամբ կրկնվել են տարբեր նշանակություն ունեցող սյունակներում: Մասնավորապես, «արտադրողի անվանումը» սյունակում արտադրողին նույնականացնող հստակ անվանում չի ներկայացվել, այլ կրկնվել են ապրանքի մակնիշին վերաբերող նույն նշումները:
Հետևաբար, մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերով չի ապահովվել հրավերի 4.3(3) կետով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկության պատշաճ ներկայացումը:
Վերոգրյալի հիման վրա հանձնաժողովը գտնում է, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նախկինում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն շտկվել:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը, ինչպես նաև հրավերի 4.3(3) կետի պահանջները՝

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.**

1. «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/51» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Արսենյան Արսեն Վաչիկի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար, քանի որ սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն շտկվել հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:
2. Վերոնշյալ հիմքով մերժել մասնակցի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:
3. Ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին և 2-րդ չափաբաժիններով համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի:

Բոլոր գործողությունները իրականացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ժ. Անտոնյան

Ա. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Դարբինյան